

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՉՄԻԱԺՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-108
«04» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ՏԵԼ.(093) 32-59-62


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարգպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում եմք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր 6 թերթ:

Համայնքի ղեկավար՝  Մ. Բարայան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9-Ա

«25» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ԼԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 159-րդ հոդվածի առաջին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ-ի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի Մարզի Ամբերդ համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 20-ի թիվ 1-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Լևիկ Վարդանյանի 2011 թվականի նոյեմբերի 24-ի անձնական դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ՝ Լևիկ Վարդանյանին տրամադրել ամենամյա արձակուրդ, 24 աշխատանքային օր (20 նվազագույն և 4 լրացուցիչ) տեվոլությանը, սկսած 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2012 թվականի հունվարի 10 -ը ներառյալ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավարի՝

Մ. Բաբայան



2011 թվականի նոյեմբերի 25
գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8-Ա

«14» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2011թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ԳՐԱՎԻՉ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենքի 191-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետի 2011 թվականի նոյեմբերի 2-ի N88 4/14 13187 գրությունը և որսորդական հրացանի պահպանման կանոնների խախտման մասին կազմած ակտը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի բնակիչ՝ Գրավիչ Գևորգի Գաբրիելյանի նկատմամբ կիրառել գրավոր նախազգուշացում, իրեն պատկանող որսորդական հրացանի պահպանման կանոնների խախտման համար:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ս. Բաբայան

2011 թվականի նոյեմբերի 14
Գ. Ամբերդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

«01» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011Թ.

Գ. ԱՄԲԵՐԴ

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԶԱԼԵԲԵԿ ԲՈՐԻՍԻ ՀԱՊԵՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում բնակիչ՝ Զալեբեկ Բորիսի Հապետյանը դիմել է, Արմավիրի մարզի Ամբերդ գյուղում Կոլտնտեսականների փողոցի թիվ 22 հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ օրինական 1100.0 քմ կից ինքնկամ 110.0 քմ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 12-ին ենթակետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ գյուղ Ամբերդ, Կոլտնտեսականների փողոցի 22 հասցեում գտնվող գույքային միավորումների նկատմամբ քաղաքացի Զալեբեկ Բորիսի Հապետյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 1100.0 քմ կից ինքնկամ 110.0 քմ զբաղեցրած

հողամասի և օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Ջալեբեկ Բորիսի Հապետյանի սեփականության իրավունքի վկայականը սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Handwritten signature of M. Baryan

Մ. Բարայան

2011 թվականի դեկտեմբերի 1

գ. Ամբերդ